ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2023թ. N_____-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին» N 48-Ն որոշման հավելվածի (այսուհետ՝ Հավելված)՝

1) 5-րդ կետում լրացնել նոր 1.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների արտաքին տեսքի պահպանումը.».

2) 5-րդ կետում լրացնել նոր 4.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1) սեփականատիրոջ կամ տիրապետողի կողմից՝ չկառուցապատված հողամասերը աղբի կուտակումից պահպանումը, կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.».

3) 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների արտաքին տեսքի պահպանմանն ուղղված միջոցառումները, այդ շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումն ու նորոգումն իրականացվում են հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Երևանի

քաղաքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված է, որ Երևան քաղաքի ավագանին սահմանում է Երևանի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը:

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջները՝ Երևան քաղաքի ավագանին 2009 թվականի դեկտեմբերի 2-ին ընդունել է «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին» N 48-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), որի հավելվածով սահմանվել են Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման պահանջները:

Որոշման հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված է, որ պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Երևանի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով: Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

Նույն Որոշման հավելվածի 4-րդ կետով նախատեսված է, որ նույն կարգի գործողությունը տարածվում է Երևան քաղաքի վարչական սահմաններում տեղակայված

(գտնվող)՝ բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա, առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա, այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա, ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա, բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

Նույն Որոշման հավելվածի 5-րդ կետով նախատեսված են նաև պարտադիր բարեկարգման աշխատանքները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանները պետության պահպանության ներքո են: Միևնույն ժամանակ, օրենսդրությամբ սեփականության ձևից կախված (համայնքային, սեփական, պետական), հուշարձանների պահպանության հավելյալ պարտավորություններ են դրվում թե՛ պետական կառավարման տարածքային մարմինների, թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների, թե՛ սեփականատերերի վրա:

Հաշվի առնելով պատմամշակութային ժառանգության պահպանության և պաշտպանության կարևորությունը, Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները՝ Նախագծով առաջարկվում է Որոշմամբ որպես պարտադիր բարեկարգման աշխատանք նախատեսել նաև պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների արտաքին տեսքի պահպանումը՝ նախատեսելով, որ դրանց արտաքին տեսքի պահպանման ուղղված միջոցառումներն իրականացվում են հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ:

Միևնույն ժամանակ, Նախագծով առաջարկվում է Որոշմամբ որպես պարտադիր բարեկարգման աշխատանք նախատեսել սեփականատիրոջ կամ տիրապետողի կողմից՝ չկառուցապատված հողամասերը աղբի կուտակումից պահպանումը, կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը:

Գործնականում, ներկայումս Երևան քաղաքում բազմաթիվ են այն դեպքերը, երբ սեփականատերերը կամ տիրապետողները չկառուցապատված հողամասերի բարեկարգմանն ուղղված որևէ քայլեր չեն ձեռնարկում, արդյունքում հիշյալ հողամասերում առաջանում են աղբի կուտակումներ և հողամասը ստանում է անխնամ և աղտոտված տեսք՝ ինքնի խոչընդոտելով Երևան քաղաքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունավետ իրականացմանը:

Նախագծով առաջարկվող կարգավորումների նպատակն է ապահովել Երևանի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանումն ու բարելավումը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացումը, ինչպես նաև քաղաքի ճարտարապետական տեսքի պահպանումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ